**Հավելված N 1**
**«ԸԱՔԻ-ԳՀԱՊՁԲ-26/02»* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

գնանշման հարցմանն մասնակցելու

«Օրգանիքս» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից «***ԸԱՔԻ-ԳՀԱՊՁԲ-26/02***»* ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1, 2, 3, 4 և 5-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Օրգանիքս» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

«Օրգանիքս» ՍՊԸ-ի՝

- Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00486487
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ customer.organix@gmail.com
- Գործունեության հասցեն է՝ Է. Հասրաթյան 7
- Հեռախոսահամարն է՝ +374 33 486487

Սույնով «Օրգանիքս» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «Օրգանիքս» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «***ԸԱՔԻ-ԳՀԱՊՁԲ-26/02***»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «Օրգանիքս» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում[1].

2) «***ԸԱՔԻ-ԳՀԱՊՁԲ-26/02***»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

• թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

• բացակայում է հրավերով սահմանված՝ «Օրգանիքս» ՍՊԸ-ն փոխկապակցված անձանց և (կամ) «Օրգանիքս» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Օրգանիքս» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է «Օրգանիքս» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝

https://www.e-register.am/am/companies/1529841/declaration/c95a6fb6-6869-447c-9814-7a78a3a0e066**

Կից ներկայացվում է «Օրգանիքս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:

«Օրգանիքս» ՍՊԸ տնօրեն՝ Արսեն Սահակյան

Կ. Տ.

---

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** - ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝*

*- եթե մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի>> բառերով,*

*-եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում:*